

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԵԴԻԱ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՒ
ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ**

Զեկույց՝ լրատվամիջոցների
օրենսդրական
կարգավորման միջազգային
փորձի ուսումնասիրության
արդյունքներով

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի մեր գործընկերոջ սույն հետազոտությունն անցկացվել է մեր կենտրոնի «Նոր մեդիա միջավայր-նոր խնդիրներ, նոր կարգավորումներ. հանուն Հայաստանում բազմակարծիք, որակյալ եւ թափանցիկ մեդիայի» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական հիմնադրամ հանուն ժողովրդավարության (EED) կազմակերպության ֆինանսական աջակցությամբ: Չեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել EED-ի տեսակետների հետ: Տեղեկատվության եւ կարծիքների համար պատասխանատու է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնը:

Ծրագրի մյուս նյութերն այստեղ են՝ **Mediametrics-** <https://www.regioncenter.info/hy/mediametrics>



«Ռեգիոն» հետազոտական կենտրոն



European Endowment for Democracy (EED)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԶԼՄ» հասկացության սահմանումը-----	6
Ով է լրագրող, իսկ ով՝ ոչ-----	10
ԶԼՄ սեփականության և ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությունը-----	12
Պետական աջակցություն ԶԼՄ-ներին-----	16
Պետական մարմիններում լրագրողների հավատարմագրումը-----	19
Տեղեկատվության ազատություն. զարգացման հնարավորություններ-----	22
Վիրավորանքն ու զրպարտությունը ԶԼՄ-ներում-----	25
Գովազդը ԶԼՄ-ներում-----	28
Հակազդեցություն ֆեյքերին ու ատելության խոսքին-----	30
Հեռարձակման ոլորտի կարգավորում-----	33
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-----	36

ԱՇՈՏ ՄԵԼԻՔՅԱՆ

Մեդիա փորձագետ,

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԴԻԱ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԼՈՒՃՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Հայաստանյան մեդիա օրենսդրությունն արմատական բարեփոխման կարիք ունի: 2003թ. ընդունված «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքն Էականորեն հնացել է, եւ այն պետք է արդիականացնել՝ հաշվի առնելով մեդիա տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, դրանց լայն տարածումն ու տեղեկատվական դաշտի վրա մեծացող ազդեցությունը: Վերջին տարում այս օրենքում կատարված փոփոխություններն ու լրացումները ցանկալի արդյունք չտվեցին:

2020թ. ուժի մեջ մտած «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքն, իր հերթին, չնպաստեց հեռարձակման ոլորտի բարեփոխմանը. այն չլուծեց հին խնդիրները եւ չտվեց թվային հեռարձակմանն անցնելու փուլում ծագած նոր մարտահրավերների պատասխանները:

2021թ. խորհրդարանն ընդունեց վիրավորանքի եւ զրպարտության համար պատասխանատվությունը խստացնող մի շարք օրենսդրական փոփոխություններ, իսկ այսպես կոչված «ծանր վիրավորանքի» համար նախատեսվեց քրեական պատասխանատվություն, ընդհուպ մինչեւ ազատազրկում: Միաժամանակ նույն տարում կառավարությունն Էական սահմանափակեց պաշտոնական տեղեկատվության հասանելիությունը, այդ թվում՝ պաշտոնյաների ավիափոխադրումների, ավիատոմսերի արժեքի, գործուղվող պատվիրակների քանակի մասին, ինչպես նաև՝ առանց մրցույթի մի անձից կատարված պետությունների, ընդերքի, ստորգետնյա ջրային պաշարների օգտագործման մասին տեղեկությունները եւ այլն:

Ընդհանուր առմամբ ՉԼՄ-ների գործունեության օրենսդրական կարգավորման կիրառվող մեխանիզմները չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին եւ անգամ հակասում են ընդունված ժողովրդավարական նորմերին: Այդ պատճառով երկրի լրագրողական մի շարք կազմակերպություններ ԶՀ կառավարությանն ու խորհրդարանին առաջարկեցին համատեղ իրականացնել մեդիա օրենսդրության բարեփոխում եւ արդիականացում: Իհարկե, այս աշխատանքն արդյունավետ չի կարող լինել առանց միջազգային փորձի բազմակողմանի ուսումնասիրության՝ Հայաստանում կիրառելի լավագույն լուծումներից օգտվելու համար:

Այս նպատակով «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի՝ Եվրոպական հիմնադրամ հանուն ժողովրդավարության (EED) կազմակերպության աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն հարցում անցկացրեց, որում մասնակցեցին Արեւելյան գործընկերության եւ Եվրոպական միության երկրների, ինչպես նաեւ՝ միջազգային կազմակերպությունների (Եվրոպայի խորհուրդ, ԵԱՀԿ, Freedom House)¹ 10 մեդիա փորձագետներ: Արտասահմանյան գործընկերները ներկայացրեցին մեդիա օրենսդրության ոլորտի ակտուալ խնդիրներն իրենց երկրներում: Զննարկվեցին նաեւ միջազգային կազմակերպությունների մոտեցումներն այդ խնդիրներին:

¹ Հարցմանը մասնակցել են՝ Լաշա Տուգուշին (Վրաստան), Պավել Մոխսենը (Ուկրաինա), Դաինիուս Ռաձեւիչյուսը (Լիտվա), Տարմու Տամմերկը (Էստոնիա), Իրժի Կուչերան (Չեխիա), Գոհար Խոջայանը (Դանիա), Դիլշոդա Մուստաֆաեւան (Շվեդիա), Ժոան Բարատան (Եվրոպայի խորհուրդ), Այդար Բոգատարովը (ԵԱՀԿ), Տաոյանա Պուլյուն (Freedom House)։

«ԶԼՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ի՞նչ է ԶԼՄ-ն ժամանակակից պայմաններում: Ի՞նչը կարելի է ԶԼՄ համարել, իսկ ի՞նչը՝ ոչ: Սրանք ամենեւին էլ ոչուրին հարցեր չեն, եթե հաշվի առնենք, որ տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն այնքան է ընդլայնել տեղեկություններ ստանալու, մշակելու եւ տարածելու հնարավորությունները, որ մեդիայի մասին ավանդական պատկերացումները դարձել են չափազանց նեղ եւ այլեւս անհամապատասխան նոր իրողություններին: Վերջին տարիների ընթացքում լրագրողական համայնքը, խորհրդարանականները, փորձագետները ակտիվ քննարկում են «ԶԼՄ»-ի օրենսդրական նոր սահմանման հարցը: Սահմանում, որը կարտացոլի ժամանակակից տեխնոլոգիական պայմանները եւ տեղեկատվական գործունեության տեսակները, կներառի ԶԼՄ-ի կարգավիճակին հավակնող բոլոր «խաղացողներին»:

Մինչեւ 2020թ. «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը գլխավորապես կարգավորում էր ավանդական ԶԼՄ-ների գործունեությունը: Եվ, չնայած «ԶԼՄ»-ի 2003 թվականի սահմանման համաձայն թվում էր, թե օրենքի բոլոր պահանջները վերաբերում էին նաեւ ինտերնետային մամուլին՝ «որպես տեղեկատվության ցանցային միջոցների», գործնականում վերջիններս չէին հետեւում այդ պահանջներին եւ դրա համար ոչ մի պատասխանատվություն չէին կրում: Ավելին, հանրային հեռահաղորդակցական ցանցից օգտվող եւ այդ պատճառով, ըստ օրենքի, մեդիայի շարքին դասվող օնլայն հարթակները չէին հրապարակում իրենց ելքային տվյալները (խմբագրության հասցեն, հեռախոսը, էլփոստը, հիմնադիրի, թողարկման համար պատասխանատու անձի անունները եւ այլն), իսկ օրենքը չէր պարտադրում անել դա: Սրա հետ մեկտեղ՝ նույն ցանցից օգտվում էին նաեւ բազմաթիվ այլ կայքեր, որոնք իրենց որպես ԶԼՄ չէին նույնականացնում եւ ամենեւին նման կարգավիճակի չէին հավակնում, կատարելով լիովին այլ գործառույթներ. օրինակ, ներկայացնում էին իրենց հիմնադրած պետամարմինների, հասարակական կազմակերպությունների, այլ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց գործունեությունը:

Միայն 2020թ. մարտին «չանգվածային լրատվության միջոց» սահմանման մեջ լրացում կատարվեց, ինչի համաձայն՝ ԶԼՄ-ների շարքին դասվեցին նաեւ «սեփական կամ վարձակալած դոմեն եւ հոսթինգ» ունեցող կայքերը: Բայց այստեղ էլ է կազուս առաջանում. դոմեն եւ հոսթինգ ունեն բոլոր կայքերը, ավելին՝ շատ ինտերնետ հարթակներ կարող են համապատասխանել նաեւ օրենքով նախատեսված այլ չափանիշների, բայց չհավակնել ԶԼՄ-ի կարգավիճակին: Եվ հակառակը՝ դոմեն եւ հոսթինգ ունեցող, բայց օրենքի այլ

պահանջներին չհամապատասխանող կայքերը, ինչպես դա գործնականում է նկատվում, իրենց ՉԼՄ են համարում, ունեն զգալի լսարան եւ անգամ հավատարմագրվում են պետական մարմիններում: Այսպիսով՝ նշված օրենքում կատարված փոփոխություններից հետո էլ «զանգվածային լրատվության միջոց» սահմանումը չի արտացոլում բոլոր նրբերանգները եւ հաշվի չի առնում գործունեության այս ոլորտում ձեւավորված ժամանակակից հարաբերությունները:

Մոտավորապես նույն վիճակն է նաեւ Արեւելյան գործընկերության մի շարք երկրներում: Այսպես, Եվրոպայի խորհրդի առջև **Ուկրաինան** պարտավորվել էր բարեփոխել մեդիա օրենսդրությունը մինչեւ 2019թ., հետո այդ ժամկետը երկարացվեց մինչեւ 2022թ., բայց փոփոխություններ այդպես էլ չկատարվեցին: Հիմա գործընթացը բարդացել է ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով: Հետեւաբար, ինչպես հաղորդեց հարցմանը մասնակցող ուկրաինացի փորձագետ Պավել Սոխեւեը, «օրենքում ՉԼՄ-ի հստակ սահմանում չկա»: Իսկ **Վրաստանում** «Խոսքի եւ արտահայտման ազատության մասին» օրենքում ՉԼՄ-ն սահմանված է որպես «զանգվածային հաղորդակցման տպագիր եւ էլեկտրոնային, այդ թվում նաեւ՝ ինտերնետային միջոց»: Վրացի մեդիա փորձագետ Լաշա Տուգուշիի գնահատմամբ, այս սահմանումը նշանակում է, որ «ՉԼՄ» հսկացության մեջ են մտնում նաեւ օնլայն լրատվամիջոցները, եւ դրանց վրա էլ են տարածվում օրենքով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները: Սակայն համացանցում կան իրենց կարգավիճակով եւ գործունեության բնույթով շատ տարբեր վեբկայքեր, որոնցից շատերը ՉԼՄ չեն, եւ, ինչպես վերը նշել ենք, չեն էլ հավակնում դրան:

Հատկանշական է, որ Եվրոպական միության մի շարք երկրներում նախընտրել են կոնկրետ չսահմանել, թե ինչ է ՉԼՄ-ն: Օրինակ, **Դանիայում** բավարար են համարել միայն նշելը, թե մեդիային վերաբերող օրենքը ինչ տեսակի գործունեություն է կարգավորում, այն է՝ լուրերի բնույթ ունեցող տեքստային, ֆոտո, աուդիո եւ վիզուալ տեղեկատվության հավաքումը, մշակումն ու տարածումը: Նման մոտեցում է կիրառվում նաեւ **Էստոնիայում**, որտեղ օրենքն այդպես էլ կոչվում է՝ «Մեդիա ծառայությունների մասին»: Այսինքն, կարգավորվում է բուն գործունեությունը՝ հեռուստա- եւ ռադիոծրագրերի պատրաստումն ու հեռարձակումը, օնլայն տիրույթում տեղեկությունների տարածումը, իսկ «ՉԼՄ»-ի սահմանում չկա: Ի դեպ, ինչպես նշեց Էստոնացի փորձագետ Տարմու Տամմերկը, նշված օրենքը տպագիր ՉԼՄ-ներին չի վերաբերում, երկրում ցանկացած ոք կարող է թերթ հրատարակել, եւ այդ գործունեությունը մեդիա ոլորտում իրավական կարգավորմանը ենթակա չէ:

Հատկանշական է նաեւ **Լիտվայի** մոտեցումը «մեդիա» սահմանմանը: Դեռ 1996թ. ընդունված օրենքում հրաժարվել են «ՉԼՄ»-ի ավանդական հասկացությունից եւ փոխարենը ներմուծել են այլ ձեւակերպում՝ «հասարակության իրազեկման միջոց»² (ՀԻՄ): Ի սկզբանե նման միջոցներ համարվեցին հեռուստա- եւ ռադիոընկերությունները, տպագիր մամուլը, տեղեկատվական գործակալությունները եւ ինտերնետ էջերը: Այս պատճառով, հետագայում, երբ ավելի ու ավելի տարածում ունեցան տեղեկատվական կայքերը, դրանց գործունեության իրավական կարգավորման մեծ խնդիրներ չառաջացան: Ընդ որում՝ ինչպես տեղեկացրեց լիտվացի փորձագետ Դաիւնիուս Ռաձեւիչյուսը, երկրում գործում է ՀԻՄ-երի հայտարարագրման ռեեստր, որտեղ գրանցվելը բացարձակապես կամավոր է, եւ ցանկացած հիմնադիր, ասենք, առցանց պարբերականի, ինքն է որոշում, թե ինչ է ստեղծում՝ հասարակության իրազեկելու միջոց, թե՞ ինքնարտահայտման միջոց: Եթե առաջինը, ապա ինքն իրեն հայտարարագրում է նշված ռեեստրում, ստանձնում է «Հասարակության իրազեկման մասին» օրենքով նախատեսված պարտականությունները, այդ թվում նաեւ՝ մասնագիտական էթիկայի հիման վրա ինքնակարգավորման համակարգին առնչվողները, եւ ստանալով ՀԻՄ ֆորմալ ստատուսը, վայելում է լսարանի եւ գովազդատուների վստահությունը, օգտվում պետական աջակցություն ստանալու հնարավորությունից: Այս մասին ավելի մանրամասն կներկայացնենք ստորեւ:

Մի կարեւոր դետալ. պետական մարմինների պաշտոնական կայքերը նույնպես ՀԻՄ են համարվում, բայց կա հստակ տարբերակում, դրանք «Հասարակության իրազեկման մասին» օրենքի սուբյեկտներ չեն, այլ գործում են ըստ «Հանրային վարչարարության մասին» օրենքի, որով նախատեսվում է պետական կառույցների պաշտոնական տեղեկատվության մատչելիություն յուրաքանչյուր քաղաքացու, այդ թվում նաեւ՝ լրագրողների համար:

Մեր այն ուղիղ հարցին, թե որեւէ երկրի օրենսդրության մեջ կա՞ «ՉԼՄ»-ի այնպիսի սահմանում, որը լիարժեք համապատասխանում է ժամանակակից պահանջներին եւ հաշվի է առնում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում առաջացած առանձնահատկությունները, **Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժան Բարատան** պատասխանեց, որ ներկայումս նման փնտրտուքը կարող է հանգեցնել հետեւյալ տարբերակներից մեկին.

² <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/2865241206f511e687e0fbad81d55a7c?jfwid=bkaxlcc0>

ա/ «ՉԼՄ»-ի սահմանման բացակայություն, քանի որ արհեստական սահմանափակումներից խուսափելու համար օրենսդիրներն ավելի ու ավելի են ձեռնպահ մնում որեւէ ձեւակերպումից,

բ/ կհայտնաբերվի նոր պայմաններին չհամապատասխանող, հնացած սահմանում:

Փորձագետի կարծիքով՝ պետք չէ «ՉԼՄ» հասկացությունը սերտորեն կապել տեխնոլոգիաների հետ. արդի պայմաններում այն կարելի է ձեւակերպել որպես գործունեության տեսակ, հասարակությանն իրազեկելու, նրա գիտակցության վրա ազդելու նպատակով կոնտենտ տարածելու ծառայություն: Այսպիսի մոտեցումն ապահովում է ձեւակերպման բաց լինելը եւ դրա «չեզոքությունը» տեխնոլոգիաների նկատմամբ, որոնք ինչպես էլ որ զարգանան եւ ինչ նորարարություններ էլ որ դրանցում առաջանան, կարող են կիրառվել որպես տեղեկատվության տարածման միջոց: «ՉԼՄ» հասկացության արդի մեկնաբանության համար սա առաջին կարեւոր պայմանն է: Երկրորդը՝ խմբագրական (կամ խմբագրի) պատասխանատվությունն է, այսինքն՝ տարածվող բովանդակության համար պատասխանատու անձի կամ անձերի խմբի առկայությունն է: Օրինակ, ինչպես համարում է ԵԽ փորձագետը, YouTube-ը «ՉԼՄ» սահմանման տակ չի կարող ընկնել, քանի որ ցանց է, որտեղ չկա խմբագրական պատասխանատվություն եւ որտեղ ցանկացած ոք կարող է «լցնել» ցանկացած կոնտենտ (իհարկե, եթե խոսքը պոռնոգրաֆիայի, ռասիզմի, բռնության քարոզի եւ քրեորեն պատժելի այլ գործողությունների մասին չէ):

Այսպիսով, «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում «ՉԼՄ» հասկացության սահմանումը, այդ թվում՝ դրանում 2020 թվականի լրացումը, չի համապատասխանում եվրոպական փորձագիտական հանրության մեջ ձեւավորվող նոր մոտեցումներին ու սկզբունքներին եւ վերանայման կարիք ունի:

ՈՎ Ե ԼՐԱԳՐՈՂ, ԻՍԿ ՈՎ՝ ՈՉ

Եվրոպայի խորհրդի փորձագետի կարծիքով, սա ավելի բարդ հարց է:

«Միջազգային չափանիշներով, մասնավորապես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի եւ Խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի դիրքորոշման համաձայն՝ խորհուրդ չի տրվում, որ օրենքը կամ պետությունը որոշեն, թե ով է լրագրող, իսկ ով՝ ոչ: Դա շատ վտանգավոր է: Իսկ քանի որ «լրագրող» հասկացության ցանկացած սահմանում նման վտանգ է պարունակում, մենք խորհուրդ ենք տալիս հրաժարվել կոնկրետ ձեւակերպման կարծի շրջանակներից: Լրագրությունը արդի պայմաններում պետք է դիտարկվի առավելագույն լայն համատեքստում, այն է՝ մասնագիտական Էթիկայի նորմերին համապատասխանող տեղեկատվական գործունեության իրականացում», - նշում է Ժոան Բարատան:

Ըստ Էռնայան, խոսքը մի մոտեցման մասին է, որն Էապես լայնացնում է լրագրության վերաբերյալ ավանդական պատկերացումները եւ ներառում ինչպես մասնագիտական, այնպես էլ քաղաքացիական լրագրությունը: Ժոան Բարատան այդ մոտեցումը ցույց տվեց հետեւյալ օրինակով. «Ես մասնագիտությամբ լրագրող չեմ, իրավաբան եմ: Բայց եթե, օրինակ, կոռուպցիայի մասին վկայող փաստերի հիման վրա հոդված գրեմ եւ տեղադրեմ իմ բլոգում, կամ հրապարակեմ որեւէ մի պարբերականում, ապա դա կդառնա լրագրողական (տեղեկատվական) մի գործողություն, որը պետք է եւ կարգավորվի, եւ պաշտպանվի օրենքով»:

Չեխիայում գնացել են հենց այդ՝ «լրագրող» հասկացությունը ձեւակերպելուց հրաժարվելու ճանապարհով: Չեխ փորձագետ Իրժի Կուչերան ճիշտ է համարում նման սահմանման բացակայությունը՝ «Ավելի լավ է այն չունենալ, քան ունենալ այնպիսի ձեւակերպում, որն Էապես սահմանափակում է տեղեկատվական գործունեության ազատությունը»: «Լրագրող» հասկացության սահմանում չկա նաեւ **Շվեդիայի ու Էստոնիայի** մեդիա օրենսդրության մեջ:

Այս ճանապարհով է գնացել նաեւ **Վրաստանը**, եւ փորձագետ Լաշա Տուգուշիի խոսքով՝ նման մոտեցման տրամաբանությունն այն է, որ ցանկացած քաղաքացի, հետեւելով օրենքի պահանջներին ու Էթիկայի նորմերին, կարող է զբաղվել տեղեկատվական/լրագրողական գործունեությամբ: Արեւելյան գործընկերության մյուս երկրներում՝ **Ուկրաին**

Նայում եւ Մոլդովայում, միջազգային նորմերի հիման վրա մեղիա օրենսդրության փոփոխության երկար եւ դժվար գործընթաց է ծավալվում: Նախատեսվում է նաեւ լրագրողի կարգավիճակի վերանայում: Ընդ որում, ինչպես կարծում է ուկրաինացի փորձագետ Պավել Մոխսենը, միջազգային կազմակերպությունների (Եվրոպայի խորհուրդ, ԵԱՀԿ եւ այլն) մշակած որոշ սկզբունքներ իր երկրում, որտեղ մեղիա ոլորտում գերիշխում են օլիգարխիկ շրջանակները, կարող են մանիպուլացվել՝ ՉԼՄ-ի եւ լրագրողի կարգավիճակները օգտագործվել որպես շղարշ, իսկ հաճախ՝ որպես միջոց սեփական քաղաքական ու ֆինանսական շահերն առաջ տանելու համար:

Այս ֆոնին առանձնանում է **Լիտվայում** կիրառվող մոտեցումը, որտեղ ընդունված սահմանման համաձայն՝ լրագրող է համարվում ցանկացած ֆիզիկական անձ, որը հասարակության իրազեկման միջոցի հետ (հիշեցնենք, որ սա ՉԼՄ-ի լիտվական անվանումն է) պայմանագրի հիման վրա մասնագիտորեն հավաքում եւ տարածում է տեղեկատվությունը եւ/կամ լրագրողական մասնագիտական կազմակերպության անդամ է: Ինչպես պարզաբանեց լիտվացի փորձագետ Դաինիուս Ռաձեւիչյուսը, կա եւ երրորդ տարբերակը, այն է՝ գրանցվել հարկային մարմնում որպես լրագրության ոլորտում անհատ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձ: Այսպիսով, լրագրող համարվելու համար պետք է ստանալ պաշտոնական կարգավիճակ ներկայացված երեք հնարավորություններից մեկի կիրառմամբ: Սա վերաբերում է նաև ֆրիլանսերներին, բլոգերներին եւ այլոց: Նման կարգավիճակի առակայությունը ոչ միայն հեղինակության հարց է, ինչն ինքնին կարելի է, այլեւ պաշտոնական տեղեկատվության մատչելիությունը դյուրացնելու, պետական մարմիններում հավատարմագրումը հեշտացնելու միջոց:

Միջազգային փորձի ուսումնասիրությունն, անկասկած, հուշում է, որ Հայաստանի մեղիա օրենսդրության բարեփոխման ընթացքում պետք է վերանայել նաեւ լրագրողի կարգավիճակի սահմանումը: «Չանգվածային լրատվության մասին» օրենքում ասվում է՝ «լրագրող՝ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ, նրա հետ կնքած աշխատանքային կամ այլ պայմանագրի հիման վրա տեղեկատվություն փնտրող, հավաքող, ստացող, պատրաստող, խմբագրող»: Սա ակնհայտորեն հնացած սահմանում է: Այն կամ անհրաժեշտ է արդիականացնել, կամ՝ պետք է հրաժարվել «լրագրող» սահմանումից, կիրառելով Շվեդիայի, Չեխիայի, Վրաստանի մոտեցումներն այդ հարցին:

ՉԼՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Անխտիր բոլոր հարցված փորձագետներն ընդգծել են ՉԼՄ-ների սեփականության եւ ֆինանսական աղբյուրների թափանցիկությունը օրենսդրական մակարդակով ապահովելու անհրաժեշտությունն ու կարեւորությունը: Հատկապես արդի պայմաններում, երբ ավելի ու ավելի «քաղաքական» գումարներ են ներդրվում տեղեկատվական ոլորտում: Սա էլ ավելի հրատապ է այն երկրների համար, որտեղ դեռ չկան ժողովրդավարական լուրջ, կայուն ավանդույթներ, որտեղ ՉԼՄ-ները շատ բեւեռացված են եւ մեծ մասամբ սպասարկում են իրենց հովանավորների քաղաքական շահերը՝ ետին պլան մղելով հասարակությանը օբյեկտիվ տեղեկություններ մատուցելու առաքելությունը:

Սեփականության թափանցիկությունը կարեւոր է «խաղի» ազնիվ կանոններ հաստատելու, լսարանի հետ ՉԼՄ-ի բաց հարաբերություններ ունենալու համար: Հասարակությունն իրավունք ունի իմանալու, թե ով է այս կամ այն հեռուստաընկերության, օնլայն պորտալի կամ թերթի սեփականատերը՝ կողմնորոշվելու համար, պատկերավոր ասած, թե «որտեղից է փչում քամին», ինչպես վերաբերվել կոնկրետ ՉԼՄ-ների տարածած բովանդակությանը, որքան վստահել, եւ ընդհանրապես, տեղեկատվության որ աղբյուրից օգտվել, իսկ որից հրաժարվել: Նման բաց գործելակերպը, այդ թվում՝ ֆինանսական թափանցիկությունը, կարեւոր է նաեւ իրենց՝ լրատվամիջոցների, հատկապես որակյալ ՉԼՄ-ների համար, քանի որ դա նպաստում է լսարանի վստահության բարձրացմանը: Միեւնույն ժամանակ, ինչպես մեզ հետ զրույցում նշեց **ԵԱՀԿ փորձագետ Այդար Բոգատարովը**, քաղաքացիների տեղեկացվածությունն առ այն, թե ովքեր են ՉԼՄ-ների սեփականատերերը, մեղիագրագիտության կարեւոր բաղկացուցիչ մասն է:

Մինչեւ 2020թ. Հայաստանի օրենսդրության մեջ չկար ՉԼՄ-ների սեփականության թափանցիկության ապահովման պահանջ: Ինչ վերաբերում է ֆինանսավորման աղբյուրներին, ապա «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ով նախատեսվում էր. «Լրատվական գործունեություն իրականացնողը, մինչև ընթացիկ տարվա մարտի երեսունմեկը ներառյալ, պարտավոր է լրատվության միջոցի հերթական թողարկման մեջ (եթե դա թողարկվում է) ... հրապարակել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունը՝ կապված տվյալ լրատվության միջոցին առնչվող գործունեության հետ՝ նշելով համախառն եկամտի և դրա կազմում նվիրատվությունների մասնաբաժնի չափերը»:

Սա հարցի բավական թույլ կարգավորում էր, ինչի հետեւանքով, օրինակ, օնլայն լրատվամիջոցները, որպես կանոն, չէին հրապարակում իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ընդ որում՝ առանց իրենց համար որեւէ բացասական հետեւանքի: Այդպես էին վարվում նաեւ մասնավոր հեռուստա- եւ ռադիոընկերությունները, որոնք, ինչպես պահանջում էր օրենսդրությունը, սահմանափակվում էին կարգավորող մարմնին՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովին, նման հաշվետվություններ ներկայացնելով: Բացառություն կարելի է համարել Հանրային հեռուստա- եւ ռադիոընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունը հրապարակելու մասին հստակ ձեւակերպված պարտավորությունը: Ըստ էության, կար ակնհայտ անհամապատասխանություն բոլոր ՉԼՄ-ներից ֆինանսական հաշվետվության ներկայացում պահանջող «Չանգվածային լրատվության մասին» օրենքի եւ հեռարձակման ոլորտը կարգավորող օրենքի միջեւ, որտեղ նման բան չէր նախատեսված (ինչպես արդեն նշել ենք, բավական էր հաշվետվություններ ներկայացնել կարգավորող մարմնին):

Միայն 2020թ. ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում հայտնվեց դրույթ (հոդված 19, մաս 2), որը պարտավորեցնում է ապահովել ֆինանսավորման թափանցիկությունը եւ մինչեւ մայիսի 1 հրապարակել նախորդ տարվա եկամուտների աղբյուրները, ինչպես նաեւ՝ ներկայացնել ընկերության հիմնադիրներին եւ մասնակիցներին: Այսինքն՝ փորձ արվեց մեկ ձեւակերպման մեջ ընդգրկել հեռուստա- եւ ռադիոընկերությունների եւ սեփականատերերի, եւ ֆինանսական աղբյուրների թափանցիկությունը: Ի դեպ, 2021թ. դեկտեմբերին նման փոփոխություններ կատարվեցին նաեւ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում: Բայց երկու օրենքների այս դրույթները գործնականում չեն աշխատում, դրանց իրականացումը դժվարանում է այն պատճառով, որ բավարար կերպով մտածված չեն իրավունքների, պարտականությունների, վերահսկման եւ չկատարման համար պատասխանատվության մեխանիզմները: Նման կարեւոր խնդրի լուծման նկատմամբ մակերեսային, ֆորմալ մոտեցում է կիրառվել:

Հատկանշական է, որ Արեւելյան գործընկերության երկրներից Վրաստանը, Ուկրաինան ու Մոլդովան ՉԼՄ-ների սեփականության թափանցիկության հարցերով զբաղվեցին Հայաստանից մի քանի տարի ավելի շուտ: Բայց բոլոր երեք երկրներում օրենսդրությունը նման պահանջ է դնում միայն հեռարձակող մեդիայի առաջ, իսկ դրա կատարումը հսկում է կարգավորող մարմինը: Որպես հիմք են վերցվել «Տեսալսողական ծառայությունների մասին» Եվրամիության Հրահանգի դրույթները: Այնուամենայնիվ, ինչպես տեղեկացրեց **Ուկրաինացի փորձագետ Պավել Մոխսենը**, իր երկրում Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային խորհուրդը հաճախ մատնանշում է, որ անբավարար իրավասություններ

ուևի հեռարձակող ընկերությունների սեփականության մասին տեղեկությունների ճշգրտությունը ստուգելու համար:

Ինչ վերաբերում է առցանց պորտալներին, ապա, վրացի փորձագետ **Լաշա Տուզուշի** կարծիքով, անհրաժեշտություն չկա պարտադրելու հրապարակել դրանց հիմնադիրների ու սեփականատերերի մասին տեղեկությունները: Մոլդովայում **Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության փորձագետ Տաոյանա Պուլուն** նույնպես համարում է, որ օնլայն մեդիայից սեփականության թափանցիկության պահանջը «խնդրահարույց է, քանի որ կարող է տեղի ունենալ անհիմն ներխուժում խոսքի ազատության ոլորտ»:

Մերձբալթյան երկրներում, որոնք, ինչպես հայտնի է, Եվրամիության անդամ են, ՉԼՄ-ների սեփականության թափանցիկության ապահովման համակարգն ավելի կուռ ու արդյունավետ տեսք ունի: Այսպես, **Էստոնիայում** «Մեդիա ծառայությունների մասին» օրենքը հռչակում է, որ հասարակությունը պետք է ունենա յուրաքանչյուր ՉԼՄ-ի սեփականության կառուցվածքի մասին տեղեկանալու հնարավորություն: Ինչպես եւ Արեւելյան գործընկերության հիշատակված երկրներում է, Էստոնիայում նույնպես սեփականության թափանցիկության մասին պահանջը միայն տեսալսողական մեդիային է վերաբերում, եւ դրա իրականացումը վերահսկում է հեռարձակման ոլորտը կարգավորող մարմինը: Սակայն «Ձեռնարկատիրության մասին» Էստոնական օրենքի համաձայն՝ ՉԼՄ-ների այլ տեսակները նույնպես պարտավոր են հրապարակել տեղեկություններ իրենց սեփականության կառուցվածքի մասին: Ինչ վերաբերում է պատասխանատվության միջոցներին, ապա, օրինակ, եթե որեւէ հեռուստաընկերություն հաղորդի իր սեփականատերերի մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, ապա կարգավորող մարմինը կարող է նշանակել մինչեւ 15 հազար եվրո տուգանք, կրկնության դեպքում՝ մինչեւ 30 հազար եվրո:

Մեդիայի սեփականության թափանցիկության ապահովման փոքր-ինչ այլ, բայց էլի կուռ, բազմամակարդակ համակարգ է գործում նաեւ **Լիտվայում**: Բացի վերը հիշատակված Հանրության իրազեկման միջոցների (ՀԻՄ) հայտարարագրման ռեեստրից, երկրի Մշակույթի նախարարությունը ստեղծել է եւս մի հարթակ, որտեղ հրապարակված են տեղեկատվական գործունեություն ծավալող բոլոր ՓԲԸ-ների, ՍՊԸ-ների, հասարակական եւ այլ կազմակերպությունների հիմնադիրների մասին բոլոր տեղեկությունները: Այս ամենն աշխատում է կամավոր հիմունքներով: Սակայն, եթե որեւէ կայք/պորտալ իրեն որպես

ՀԻՄ Է նույնականացնում եւ ուզում Է այդպիսին համարվել, ապա այն պետք Է ներկայա-
նա այդ ռեեստրներում եւ ստանձնի օրենքով նախատեսված պարտավորություններն ու
իրավունքները, ինչպես նաեւ գործի ինքնակարգավորման սկզբունքներին համապա-
տասխան: Նախարարությունը որեւէ իրավասություն չունի որոշելու, թե ով կարող Է
գրանցվել ռեեստրում, իսկ ով՝ ոչ: Ավելի լուրջ վերաբերմունքի արժանանալու համար խմ-
բագրություններն իրենք են գրանցվում: Բացի այդ, երկրում բոլորի համար բաց եւ մատ-
չելի գործում Է իրավաբանական անձանց ռեեստր, որտեղ նույնպես կան տեղեկություն-
ներ լրատվամիջոցների սեփականության մասին: Ի հավելումն այս ամենին, «Թրանսփա-
րենսի ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության լիտվական մասնաճյուղը մշակել եւ
շուտով կթողարկի սեփականության մասին մի հարթակ, որտեղ մեկտեղված են եւ հե-
տագայում կհամալրվեն տեղեկություններ պետական բոլոր ռեեստրներից, այդ թվում
մեդիային վերաբերող:

Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժոան Բարատան խորհուրդ Է տալիս ՉԼՄ-ների սե-
փականության թափանցիկության մասին օրենսդրական դրույթներ մշակելիս հստակ եւ
միանշանակ ձեւակերպել այդ պարտավորությունը եւ նախատեսել խիստ պատասխա-
նատվություն այն չկատարելու համար: Ընդ որում՝ պետք Է պահանջել, որ հրապարակ-
վեն տեղեկություններ ոչ միայն առաջնային մակարդակի սեփականության (օրինակ՝
կոնկրետ ՍՊԸ), այլեւ սեփականության երկրորդ (ով Է այդ ՍՊԸ-ն հիմնադրել), երրորդ
(ովքեր են հիմնական բաժնետերերը) եւ այլ մակարդակների մասին տեղեկատվություն,
այսինքն՝ ներկայացնել սեփականատերերի ողջ շղթան: Հասկանալի Է, որ այս պահանջը
հասցեագրված Է նախեւառաջ հեռարձակող ՉԼՄ-ներին, եւ դրա իրականացումը վե-
րահսկվում Է կարգավորող մարմնի կողմից: Բայց, ինչպես կարծում Է Ժոան Բարատան,
նման մոտեցում կարող Է կիրառվել նաեւ մյուսների, այդ թվում՝ օնլայն մեդիայի նկատ-
մամբ: Փորձագետն առաջարկում Է բոլոր ՉԼՄ-ներին պարտադրել սեփականատերերի
մասին տեղեկություններ տեղադրել իրենց կայքերում, իսկ ավելի լավ կլինի, եթե այդ
նպատակով հատուկ հարթակ եւ մարմին ստեղծվի, որը կհետեւի մեդիա սեփականու-
թյան թափանցիկության ապահովմանը, բայց չի ունենա ՉԼՄ-ների գործունեությանը մի-
ջամտելու իրավասություններ: Այս տեսակ մարմինն ու մատնանշված հարթակն ընդա-
մենը գործիքներ են, որոնք թույլ են տալիս ՉԼՄ-ներին հայտնել պետությանը: «Ես այստեղ
եմ: Ես ՉԼՄ եմ: Ես հետեւում եմ օրենքին եւ բաց եմ հանրության առաջ»:

ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԼՄ-ՆԵՐԻՆ

Այս հարցի մասին փորձագետների կարծիքները բաժանվել են: **Մոլդովայում Freedom House-ի ներկայացուցիչ Տատյան Պուլյուն** նորմալ է համարում, որ երկրում պետությունը չի աջակցում ՉԼՄ-ներին, նկատի ունենալով, որ դա կարող է հանգեցնել իշխանությունների՝ դրանց գործունեության վրա ազդեցությանը: Էլ ավելի որոշակիորեն արտահայտվեց **ՈԼԿՐԱԽՆԱԳԻ ՓՈՐՃԱԳԵՏ ՊԱՎԵԼ ՄՈՒՍԵՆԵՆԸ**, նշելով, որ «օլիգարխիային պատկանող լրատվամիջոցներ ունեցող երկրում դրանց պետական աջակցություն տրամադրելը կհանգեցնի օլիգարխիսերին աջակցությանը»: Նրա խոսքով, ՈԼԿՐԱԽՆԱԿԱՅԻՆ պետությունը երբեմն ֆինանսական աջակցություն է առաջարկում սոցիալական կարեւոր նշանակություն ունեցող թեմաներ լուսաբանելու համար (օրինակ՝ COVID-19 համաճարակի դեմ պայքարի թեմայով), բայց դրանք հատուկեւս դեպքեր են, ՉԼՄ-ներին աջակցելու համակարգային մոտեցում չկա:

Վրաստանում նախարարություններն ու գերատեսչություններն ՈԼԿՐԱԽՆԱԿԻ համեմատ ավելի հաճախ են մեղիային առաջարկում լուսաբանել պետության համար հրատապ հարցերը, մրցույթներ են հայտարարվում, պայմանագրեր կնքվում: Բայց միեւնույն է, ինչպես կարծում է **ՎՐԱԳԻ ՓՈՐՃԱԳԵՏ ԼԱՉԱ ՏՈԼԳՈՂԻՆ**, այս ամենում պետական մարմինների ազդեցության տակ ընկնելու լուրջ վտանգներ կան, կաշկանդվում է իշխանությունների գործունեության քննադատական ընկալումների հնարավորությունը:

ՉԵԽԻԱՅՈՒՄ նույնպես ՉԼՄ-ների ուղիղ պետական աջակցություն չկա: Գրանտային ծրագրերի տեսքով մի քանի սխեմաներ են գործում, դրանցից որոշներն ուղղված են ազգային փոքրամասնությունների լեզվով բովանդակություններ ստեղծելուն ու տարածելուն, մշակութային ծրագրերի իրականացմանը եւ այլն: Սակայն մեր այս հարցումն անցկացնելու ժամանակ, ինչպես մեզ հաղորդեց **ՉԵԽ ՄԵԴԻԱ-ԻՐԱՎԱՔԱՆ ԻՐԺԻ ԿՈՆՇԵՐԱՆ**, երկրի իշխանությունները փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ մշակում էին օնլայն ՉԼՄ-ներին սատարելու սխեմա, ապատեղեկատվության ու կեղծ լուրերի դեմ պայքարելու, թվային միջավայրում որակյալ լրագրության զարգացման համար:

Եվրամիության երկու ուրիշ երկրներում՝ **Լիտվայում եւ Էստոնիայում**, ՉԼՄ-ներին պետական աջակցության մոտեցումները տարբեր են: Էստոնիայում այն բավական սահմանափակ է, եւ ամեն տարի ուղղվում է միայն մշակութային, կրթական եւ մանկական հրա-

տարակույթյուններին: Ամբողջապես պետական աջակցությամբ է գործում Հանրային հեռուստառադիոընկերությունը: Սակայն բոլոր մասնավոր ՉԼՄ-ների համար իջեցվել է շրջանառության հարկը: Իհարկե, բիզնեսի այլ ոլորտների ներկայացուցիչները սա որոշակի դժգոհությամբ են ընդունում, բայց իշխանությունները համարում են, որ մեդիայի համար այսպիսի արտոնություն պետք է կիրառվի: **Էստոնացի փորձագետ Տարմու Տամմերկը** մեզ տեղեկացրեց պետական աջակցության մի յուրահատուկ մեթոդի մասին. կառավարությունը սուբսիդավորում է թերթերի առաքումը երկրի տարբեր շրջանների, հատկապես գյուղական բնակավայրերի բաժանորդներին: Ճիշտ է, այդ գումարները ստանում է փոստային ծառայությունը, բայց տպագիր մամուլը նույնպես շահում է դրանից:

Լիտվայում մեդիային պետական աջակցություն ավելի լայնորեն է ցուցաբերվում: Այստեղ գործում է հատուկ Հիմնադրամ (այն հիմնել են կառավարում են լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչները), որը պետքյուլջեից ստացվող գումարներով ֆինանսավորում է հասարակությանն իրազեկման միջոցներին (ՀԻՄ): Հիմնադրամին կարող է դիմել ՀԻՄ-երի հայտարարագրման ռեեստրում են այլ հարթակներում գրանցված ցանկացած խմբագրություն: Բացի այդ, պետական մարմինները տարբեր հրատապ թեմաների լուսաբանման համար կանոնավոր կերպով մրցույթներ են հայտարարում, եւ մեդիան ակտիվ մասնակցում է դրանց: Եվ վերջինը, բոլոր ՀԻՄ-երն օգտվում են հարկային արտոնություններից, մասնավորապես՝ նրանց համար ԱԱՀ-ն 2-2,5 անգամ ավելի ցածր է բիզնեսի այլ տեսակների համեմատ:

Եվրամիության տնտեսապես ավելի զարգացած երկրներում՝ **Շվեդիայում եւ Դանիայում**, պետական աջակցությունը նախատեսված է բոլոր ՉԼՄ-ների համար: Մշակված են բավական հստակ չափանիշներ, այդ թվում՝ մասնագիտական էթիկայի նորմերի առումով, եւ բոլոր պահանջներին համապատասխանելու դեպքում խմբագրությունները ֆինանսավորում են ստանում: Ընթացակարգը լիովին թափանցիկ է, յուրաքանչյուր հետաքրքրվող կարող է իմանալ, թե որ ՉԼՄ-ին ինչ գումար է տրամադրվել:

Ընդհանուր առմամբ, նաեւ միջազգային կազմակերպություններն են ընդունելի համարում ՉԼՄ-ների պետական աջակցությունը: Բայց, ինչպես նշում է **Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժան Բարատան**, դա պետք է զգուշորեն անել. առաջինը՝ անհրաժեշտ է մշակել հստակ չափանիշներ, երկրորդ՝ պետության համար պետք է նախատեսված լինեն խիստ սահմանափակումներ, որ այն չկարողանա միջամտել եւ ազդել ՉԼՄ-ի գործունեության վրա, երրորդ՝ ֆինանսական միջոցների տրամադրման ողջ ընթացակարգը

պետք է առավելագույնս թափանցիկ լինի: **ԵԱՀԿ փորձագետ Այդար Բոգատարովի** կարծիքով, պետական աջակցությունը պետք է ուղղված լինի ՉԼՄ-ների գործունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն եւ ոչ մի դեպքում չօգտագործվի որպես միջամտության եւ ՉԼՄ-ին ճնշելու գործիք:

Իսկ ինչպիսի՞ն է այս հարցում իրավիճակը Հայաստանում: Մինչեւ 2018-ի թավշյա հեղափոխությունը ՀՀ մշակույթի նախարարությանն առընթեր Գրահրատարակչության գործակալությունն ամեն տարի պետքյուլքեի միջոցներից ֆինանսական օգնություն էր ցուցաբերում տպագիր ՉԼՄ-ներին: Ի սկզբանե նախատեսվում էր, որ կսուբսիդավորվեն բոլոր թերթերն ու ամսագրերը: Սակայն հետագայում որոշվեց ֆինանսավորել մշակութային-լուսավորչական, գիտական, գրական, մանկական եւ մարզային պարբերականները, ինչպես նաեւ ազգային փորձամասնությունների լեզվով լույս ընծայվող թերթերը: Իշխանությունները մերժեցին լրագրողական կազմակերպությունների առաջարկությունները՝ կապված սուբսիդավորման արդար ձևաչափ ներդնելու հետ, այդ մասնագիտական կազմակերպությունների մասնակցությունը որոշումներ ընդունելու գործընթացում նվազագույնի հասցվեց, իսկ հետո լիովին դադարեցվեց: Մինչդեռ, պարբերականներին պետական աջակցության տրամադրման բոլոր փուլերում անկախ փորձագետները ընդգծում էին շահառուների ընտրության եւ սուբսիդավորման չափերի որոշման հստակ եւ հիմնավոր չափանիշների բացակայությունը, ինչպես նաև նշում էին, որ ընթացակարգը թափանցիկ չէ, իսկ որոշումները՝ վստահություն չեն ներշնչում: Այս աջակցությանը զուգահեռ առանձին պետական մարմիններ տարբեր թեմաների լուսաբանման մրցույթներ էին հայտարարում կամ համագործակցության մասին ուղիղ պայմանագրեր էին կնքում իրենց հետաքրքրող ՉԼՄ-ների հետ: Այս կարգի «նախաձեռնությունները» նույնպես աչքի չէին ընկնում թափանցիկությամբ եւ օբյեկտիվությամբ, հաճախ կոռուպցիոն ռիսկեր էին պարունակում:

Իշխանափոխությունից հետո այդպիսի ֆինանսավորում ստացող ՉԼՄ-ների շրջանակը շեշտակի նեղացավ, իսկ հետո մեղիայի պետական աջակցության ինստիտուտը վերացվեց: Այնուամենայնիվ, պետական որոշ մարմիններում հի-

մա էլ է պահպանվել կոնկրետ խմբագրությունների հետ պայմանագրեր կնքելու պրակտիկան, բայց այդ մասին առանձնապես չի հայտարարվում, եւ նրանց համագործակցության պայմանները քչերին է հայտնի դառնում:

Ակնհայտ է, որ Հայաստանում ՉԼՄ-ների պետական աջակցության ինստիտուտը չի կայացել, եւ առջեւում է միջազգային փորձի հիման վրա նման համակարգի մշակումն ու ներդրումը: Համակարգ, որը կնպաստի որակյալ լրագրության զարգացմանը:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

«Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի ամենամեծ հոդվածներից մեկը՝ վեցերորդը, նվիրված է լրագրողների հավատարմագրմանը: Այստեղ մանրամասն ներկայացված են դրա պայմաններն ու կարգը: Այնուամենայնիվ, պետական մարմիններում ՉԼՄ-ների ներկայացուցիչների հավատարմագրումն ու գործունեությունը միշտ ուղեկցվել են հակասություններով, որոնք ժամանակ առ ժամանակ կոնֆլիկտային իրավիճակներ են առաջացրել: Տասնամյակների ընթացքում իշխանությունները փոխվել են, սակայն լրագրողների հավատարմագրման ինստիտուտի եւ հենց նրանց նկատմամբ վերաբերմունքը չի բարելավվել: Սա հատկապես դրսևորվում է խորհրդարանում. գրեթե բոլոր ժամանակաշրջաններում Ազգային ժողովի ղեկավարությունը, Հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչությունը ՉԼՄ-ների ներկայացուցիչների աշխատանքի համար հաճախ այնպիսի կանոններ է սահմանել, որոնք հակասել են հիշատակված օրենքի դրույթներին: Մեդիա հանրության բողոքները, որպես կանոն, ուշադրության չէին արժանանում, իսկ լրագրողների ու օպերատորների հավատարմագրումը, կարծես, որպես «լավություն» էր մատուցվում:

Իրավիճակն էլ ավելի վատացավ 2021թ. խորհրդարանական ընտրություններից հետո: 8-րդ գումարման ԱԺ-ն իր աշխատանքի առաջին իսկ օրը ներքին նորմատիվային որոշմամբ սահմանափակեց ՉԼՄ ներկայացուցիչների շարժը խորհրդարանի շենքում: Իսկ

նույն տարվա դեկտեմբերին լրացումներ եւ փոփոխություններ ընդունվեցին «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում, եւ նորամուծություններից մեկն այն դրույթն էր, որով լրագրողը կարող է զրկվել հավատարմագրումից, եթե խախտի տվյալ պետական մարմնում աշխատելու հաստատված կարգը:

Կան լուրջ հիմքեր կարծելու, որ այս օրենսդրական նախաձեռնության հեղինակները նախապես չեն ուսումնասիրել միջազգային փորձը եւ իշխանական կառույցների՝ ՉԼՄ ներկայացուցիչների հետ հարաբերություններ կառուցելու ժամանակակից մոտեցումները:

Համենայնդեպս, ինչպես ցույց տվեց փորձագիտական հարցումը, ոչ Վրաստանում, ոչ Ուկրաինայում, ոչ մանավանդ Եվրամիության երկրներում (Լիտվայում, Էստոնիայում, Չեխիայում, Դանիայում եւ Շվեդիայում) մեղիա օրենսդրության մեջ նախատեսված չէ պետական մարմնի կողմից լրագրողին հավատարմագրումից զրկելու հնարավորությունը:

Միջազգային կազմակերպությունների դիրքորոշման համաձայն՝ ՉԼՄ-ների հավատարմագրման ընթացակարգն, ընդհանուր առմամբ, համատեղելի չէ մարդու իրավունքների իրացման հետ, եւ պետությունը չպետք է իրավասություն ունենա որոշելու, թե որ ՉԼՄ-ն եւ նրա որ ներկայացուցիչը կարող է իշխանության կոնկրետ մարմին մուտք ունենալ եւ լուսաբանել նրա գործունեությունը, իսկ որը՝ ոչ: Այս կանոնից կարող է լինել միայն երկու բացառություն՝ անվտանգության նկատառումներից բխող եւ/կամ տարածքի սղությանը պայմանավորված սահմանափակումներ: Բայց վերջին դեպքում պետական մարմինները պարտավոր են ՉԼՄ-ների համար տեղեկություններ ստանալու եւ հարցեր տալու այլ լրատվային պայմաններ ստեղծել, ինչպես COVID-19 համաճարակի ժամանակ էր: Այսպիսով, ինչպես կարծում է **Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժան Բարատան**, արդի պայմաններում անհրաժեշտ է արմատապես վերանայել լրագրողների հավատարմագրման նկատմամբ վերաբերմունքը, պետք է առավելագույնս պարզեցնել այն կամ կիրառել միայն բացառիկ դեպքերում:

Իր հերթին **ԵԱՀԿ փորձագետ Այդար Բոգատարովը**, հղում անելով ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցչի 2006 եւ 2016 թթ. զեկույցներին, որոնք նվիրված են լրագրողների հավատարմագրմանը, ընդգծեց, որ մի շարք երկրներում այդ ընթացակարգը դիտարկվում է որպես աշխատանքի թույլտվության գործիք, ինչը չի համապատասխանում կարծիքների ազատ արտահայտման ոլորտում միջազգային ստանդարտներին: Մասնավորապես, Ներկայացուցչի 2006թ. Հատուկ զեկույցում նշվում է, որ

հավատարմագրումը «ստեղծվել է, որպեսզի լրագրողները սահմանափակ տարածքով հատուկ վայրեր մուտքի թույլտվություն ստանան, ինչպես նաեւ մուտք ունենան որոշ «փակ գոտիներ», այդ թվում՝ ռազմական գործողությունների գոտիներ եւ այն վայրեր, որոնք վտանգավոր են համարվում կամ որոնք փակել են իշխանությունները՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Հավատարմագրումը նաեւ թույլ է տալիս մասնակցել պաշտոնական միջոցառումներին եւ այցելություններին»³: Հետեւաբար, դա ՉԼՄ-ների ներկայացուցիչների գործունեությանն աջակցելուն միտված արտոնություն է, այլ ոչ թե նրանց նկատմամբ ճնշում կիրառելու միջոց: Իսկ հավատարմագրման ցանկացած սահմանափակում պետք է պայմանավորված լինի կարեւոր սոցիալական անհրաժեշտությամբ:

Էստոնացի փորձագետ Տարմու Տամմերկի կարծիքով, արդի պայմաններում լրագրողների հավատարմագրումն իր դարն ապրած երևույթ է: Համակարգային առումով այն Էստոնիայում չի կիրառվում: Բացառություն են միայն կառավարության ամենշաբաթյա մամուլի ասուլիսները: Դրանց մասնակցելու համար պետք է հավատարմագրվել: Եվ դա պայմանավորված է տարածքի սահմանափակ լինելով եւ բոլոր ցանկացողներին տեղավորելու անհնարինությամբ: Կառավարության մամուլի ասուլիսներին մշտական հավատարմագրում ունեն 10 համազգային հեռուստա- եւ ռադիոընկերություններ, թերթեր, իսկ մնացած ՉԼՄ-ները, եթե մտադիր են ներկա լինել, պետք է օնլայն գրանցվեն: Երբ տեղեր այլեւս չեն մնում, գրանցումը դադարեցվում է: Կա մի կարեւոր պայման. այդ ընթացակարգին կարող են մասնակցել միայն այն ՉԼՄ-ները, որոնք ոչ պետական՝ Էստոնիայի մեդիա-ձեռնարկությունների կազմակերպության անդամ են: Իսկ դրա անդամ դառնալով՝ տվյալ ՉԼՄ-ն ներգրավվում է ինքնակարգավորման համակարգում եւ ստանձնում է մասնագիտական էթիկայի կանոններին հետեւելու պարտավորություն: Ուրիշ պետական մարմիններում մամուլի ասուլիսների եւ այլ միջոցառումների լուսաբանման համար գործում է միայն գրանցման համակարգը, այսինքն՝ ՉԼՄ-ն տեղեկացնում է այդ մարմին, որ այնտեղ է ուղարկելու իր աշխատակցին:

Լիտվայում, ըստ օրենքի, ոչ մի պետական մարմին չի կարող ՉԼՄ-ների ներկայացուցիչների հավատարմագրման ընթացակարգ հաստատել առանց լրագրողական կազմակերպությունների հետ քննարկման ու նրանց հավանության: Ինչպես հաղորդեց **լիտվացի**

³ OSCE Representative on the Freedom of Media Special Report on “Accreditation of Journalists in the OSCE Area: Observations and Recommendations”, 25 October 2006. URL: <https://www.osce.org/files/f/documents/0/b/22065.pdf>

փորձագետ Դաիսիոս Ռաձեւիչյունը, օրենքում նաեւ նշված է, որ հավատարմագրում մը ՉԼՄ-ի, այլ ոչ թե պետական մարմինների իրավունքն է: Եվ եթե խմբագրությունը դիմում է հավատարմագրում ստանալու համար, ապա մերժումն անհնարին է: Բայց հիշեցնենք, որ մեդիա համարվելու համար խմբագրությունը պետք է գրանցվի հասարակության իրազեկման միջոցների (ՀԻՄ) հայտարարագրման ռեեստրում, ինչը նշանակում է, որ այն ապահովում է իր սեփականության եւ ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությունը, ընդգրկված է ինքնակարգավորման համակարգում, ընդունում է մասնագտական էթիկայի նորմերը եւ այսպես շարունակ:

Երբ ներկայացված՝ մեդիա օրենսդրությունը եւ ՉԼՄ-ների ինքնակարգավորումը փոխկապակցող այսպիսի կոռւ համակարգը, որտեղ ներդաշնակորեն ներառված է նաեւ լրագրողների հավատարմագրման ընթացակարգը, համեմատում ենք հայաստանյան իրողությունների հետ, ակնհայտ է դառնում, որ մեր երկրում էլ անհրաժեշտ է մշակել եւ ներդնել տեղեկատվական բնագավառում հարաբերություններ կարգավորելու նույնքան մտածված ու աղյուսավետ մեխանիզմներ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեեւ 2003թ. ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը ժամանակին համարվում էր հետխորհրդային տարածքներում եւ Արեւելյան Եվրոպայում լավագույններից մեկը, ավելին՝ մեծապես ապահովել էր պաշտոնական տեղեկատվության մատչելիությունը, այնուամենայնիվ, տեղական փորձագետների կարծիքով, այն եւս արդիականացման կարիք ունի: Բացի փոփոխությունների անհրաժեշտությունից, որոնք պայմանավորված են տեխնոլոգիաների զարգացմամբ, հայտնաբերվել են տարբեր «տողանցքեր», որոնցից ակտիվ օգտվում է տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնյաների ոչ բարեխիղճ մասը:

Այսպես, օրենքի համաձայն՝ Հայաստանի պետական կառույցները պարտավոր են 5-օրյա ժամկետում պատասխանել իրենց հասցեագրված հարցումներին: Բայց եթե պատասխանի համար կա հավելյալ աշխատանքի կարիք, ապա այդ նույն 5 օրերի ընթացքում պետական մարմինները պետք է տեղեկացնեն իրենց դիմած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, եւ այդ դեպքում տեղեկությունները կարող են տրամադրվել 30 օրվա ընթացքում: Նման հնարավորությունից օգտվելով՝ նախարարություններն ու գերատեսչությունները, իշխանական այլ կառույցներ հաճախ ի սկզբանե 30 օր են պահանջում: Շարքային քաղաքացիների պարագայում, հնարավոր է, դա այդքան էլ էական չէ, թեեւ դարձյալ անընդունելի է: Բայց ՉԼՄ-ների համար տեղեկության այդքան ուշ տրամադրումը հաճախ հանգեցնում է դրա արդիականության կորստին եւ հրապարակման անիմաստությանը: Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ 30 օր հետո պետական մարմինները, հատկապես ուժայինները, պատասխանել են, թե հայցվող տեղեկությունները պետական գաղտնիք է պարունակում: Հասկանալի է, որ նման պատասխան կարող էր նաեւ 5-օրյա ժամկետում տրվել: Եթե չասենք արդեն, որ ինֆորմացիա տրամադրելուց խուսափելու կամ հարցումներն ակնհայտորեն անտեսելու հետ մեկտեղ սա խուսափության ձեւ է դառնում: Ու թեեւ երկրում ձեւավորվել է բավական լավ պրակտիկա, երբ դատարանները պարտավորեցնում են պետական մարմիններին տրամադրել հայցված տեղեկությունները, միևնույն է՝ դա նույնպես բավական երկար գործընթաց է:

Ի տարբերություն սրա, Լիտվայում օրենսդրությունը նախատեսում է մեդիայի համար մի շարք արտոնություններ: Օրինակ, խմբագրությունների կամ լրագրողների՝ տեղեկություններ տրամադրելու հարցումներին պետական մարմինները պետք է պատասխանեն 1 օրվա ընթացքում (շարքային քաղաքացիների համար սահմանված է 1-ամսյա ժամկետ): Բացի այդ, ՉԼՄ-ների ներկայացուցիչները կարող են անվճար օգտվել պետական տարբեր ռեսուրսներից (շարքային քաղաքացիները դրա համար պետք է վճարեն), նրանք առավել շատ հնարավորություն են ստանում ծանոթանալու դատական գործերին եւ այլն:

Իհարկե, Լիտվայում, թեեւ հազվադեպ, բայց լինում են տեղեկատվության ազատության խախտումներ: Բայց այդ դեպքում չկա միանգամից դատարան դիմելու անհրաժեշտություն: Կան նման վեճերով զբաղվող պետական այլ ինստիտուտներ: Նախեւառաջ, դա Խորհրդարանական վերահսկիչն է (այլ կերպ ասած՝ Օմբուդսմենը), որի գործառույթների մեջ մտնում են նաեւ պաշտոնական տեղեկատվության մատչելիության հարցերը: Բացի այդ, խորհրդարանին կից գործում է Լրագրողների Էթիկայի հարցերով վերահսկի-

չը (այլ կերպ ասած՝ ՉԼՄ հարցերով Օմբուդսմենը), որը նույնպես պետական մարմիններից ինֆորմացիա ստանալու հետ կապված վեճերը լուծելու իրավասություն ունի: Եվ վերջապես, տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելը կարող է դիտարկվել որպես լրագրողի աշխատանքի խոչընդոտում, ինչի համար, ըստ երկրի Վարչական օրենսգրքի, պատասխանատվություն է սահմանված: Ինչ վերաբերում է ինքնին դատական գործընթացներին, ապա դրանք հնարավորինս արագ են անցնում, սակայն դատավարության արագացված ընթացակարգ օրենքով չի նախատեսված, եւ, ըստ **Լիտվացի փորձագետ Դաիսիուս Ռաճեկիչուսի**՝ այն անհրաժեշտ է:

Ինչպես տեսնում ենք, Լիտվայում նաեւ տեղեկատվության մատչելիության հարցերն են ներդաշնակորեն կապվում ՉԼՄ-ների օրենսդրական կարգավորման եւ ինքնակարգավորման համակարգի հետ, ընդ որում՝ այստեղ նույնպես կան որոշ արտոնություններ, որոնք խթանվում են հասարակության իրազեկման միջոցների ռեսսորում ներգրավվելու եւ մեղիա օրենսդրությամբ ու լրագրողական էթիկայով նախատեսված պարտավորություններ ստանձնելու միջոցով:

Ի տարբերություն Լիտվայի, Էստոնիայում «Պաշտոնական տեղեկատվության մատչելիության մասին» օրենքը լրագրողների համար արտոնություններ չի նախատեսում: Այն հավասար իրավունքներ է տրամադրում բոլոր քաղաքացիներին՝ իշխանական մարմիններից իրենց հետաքրքրող տեղեկությունը ստանալու համար, եթե այն չի պարունակում պետական կամ այլ գաղտնիք: Բայց սրա հետ մեկտեղ, ինչպես մեզ հայտնեց **Էստոնացի փորձագետ Տարմու Տամմերկը**, երկրում ձեւավորվել է պետական կառույցների եւ ՉԼՄ-ների միջեւ փոխհարաբերությունների մշակույթ. խմբագրություններին կամ դրանց աշխատակիցներին պաշտոնական ինֆորմացիան միանգամից է մատուցվում, կամ՝ հնարավորինս արագ: Իսկ վեճերի ծագման դեպքում կարելի է դիմել կամ Անձնական տվյալների պաշտպանության տեսչությանը, կամ՝ Օմբուսմենի գրասենյակ, որոնք զբաղվում են տեղեկատվության ազատության ապահովման հարցերով: Ի դեպ, այս երկու ինստիտուտներն ունեն օրենքը խախտած պետական մարմիններին տուգանելու իրավունք:

Ինչպես հայտնի է, տեղեկատվության ազատության զարգացման առավել խոր ավանդույթներ եւ օրենսդրական մշակույթ ունի Շվեդիան, որն աշխարհում առաջինը, դեռ 1766 թվականին, ընդունեց քաղաքացիների համար պաշտոնական տեղեկատվության եւ փաստաթղթերի մատչելիությունը ապահովող օրենք: Իսկ այսօր, ինչպես մեզ տեղեկացրեց **շվեդացի փորձագետ Դիլշոդա Մուստաֆաեւան**, հասարակության համար

բաց է անգամ բարձրաստիճան պաշտոնյաների նամակագրությունը, եթե այն չի պարունակում պետական կամ այլ գաղտնիք: Մեզ հետ զրույցի ժամանակ Շվեդիայի օրինակը բերեց նաեւ **Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժան Բարատան**. Երկրի յուրաքանչյուր քաղաքացի կարող է ծանոթանալ վարչապետի հեռախոսագանգերի ցանկին, որտեղ, իհարկե, որոշակի գաղտնի տեղեկությունները թաքցված են: Նման թափանցիկության տրամաբանությունն այն է, որ նաեւ կառավարության ղեկավարի հեռախոսը գնված է հարկատուների միջոցներով, ու կապի համար ծախսերի վճարումը կատարվում է նույն աղբյուրից, հետեւաբար՝ հասարակությունն իրավունք ունի իմանալու, թե ինչպես են օգտագործվում իր գումարները:

Շվեդիայի օրինակն, իհարկե, բացառիկ է: Բայց այն հատկապես հետաքրքիր է Հայաստանի տրամագծորեն հակառակ պրակտիկայի հետ համեմատելիս, որտեղ պետության առաջին երեք դեմքերի՝ նախագահի, վարչապետի ու խորհրդարանի նախագահի ներկայացուցչական ծախսերն օրենսդրորեն համարվում են պետական գաղտնիք: «Ժողովրդավարական հասարակությունում խոսքի եւ տեղեկատվության ազատության տեսանկյունից դա չի կարող ունենալ որեւէ արդարացում, եւ պետք է փոխվի», - ընդգծեց Եվրոպայի խորհրդի փորձագետը:

ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆ ՈՒ ՉՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԼՄ-ՆԵՐՈՒՄ

Այս խնդիրը Հայաստանի համար հատկապես հրատապ դարձավ 2020թ. Ղարաբաղյան 44-օրյա պատերազմից հետո, երբ բռնկվեց խորը հասարակական-քաղաքական ճգնաժամ, եւ բողոքի զանգվածային ակցիաները, քաղաքական, հասարակական գործիչների, շարքային քաղաքացիների հանրային ելույթներն ուղեկցվում էին հայիոյանքով, ատելության խոսքով, ապատեղեկատվությամբ ու կեղծ լուրերով, որոնք հաճախ հայտնվում էին նաեւ ՉԼՄ-ներում: Իշխանությունները սրան արձագանքեցին օրենսդրական խիստ փոփոխություններով. 2021թ. մարտի 24-ին ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում 3 անգամ ավելացվեցին վիրավորանքի ու զրպարտության համար դրամական փոխհատուցման առանց այդ էլ բարձր շեմերը (դրանք հասցվեցին համապատասխանաբար՝ մինչեւ 3 միլիոն ու 6 միլիոն դրամի): Իսկ հետո, նույն թվականի հուլիսի 29-ին ՀՀ Զրեական օրենսգրքում ներմուծվեց նոր՝ 137.1 հոդվածը, որը նախատեսում է պատիժ

այսպես կոչված «ծանր վիրավորանքի» (նկատի է առնվում հայիոյանքը) համար՝ ընդհուպ մինչև ազատագրվում:

Այս երկու օրենսդրական նախաձեռնություններն արժանացան երկրի լրագրողական համայնքի ու միջազգային կազմակերպությունների սուր քննադատությանը: Անկախ փորձագետների կարծիքով ընդունված լրացումներն ու փոփոխությունները, անհամաչափ խիստ են, չեն լուծում առկա խնդիրները եւ սպառնում են խոսքի ազատությանը:

2010թ. վիրավորանքի ու զրպարտության ապաքրեականացումից հետո «ծանր վիրավորանքի» քրեականացումն, ըստ էության, հետքայլ էր: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ նոր հոդվածում նախատեսված են պատժի էապես ավելի խիստ միջոցներ, եթե հայիոյանք պարունակող արտահայտությունները հասցեագրված են պաշտոնատար անձանց, հանրային գործիչներին եւ վերաբերում են նրանց պարտականությունների կատարմանը: Իսկ սա հակասում է համընդհանուր միջազգային նորմերին, այդ թվում՝ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին: Այդ պատճառով Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը 2022թ. հունվարի 27-ին ընդունած՝ Հայաստանին վերաբերող իր բանաձեռում⁴ կոչ արեց իշխանություններին հրաժարվել «ծանր վիրավորանքի» քրեականացումից: Քննադատական գնահատականներով հանդես եկան նաեւ միջազգային իրավապաշտպան Freedom House եւ Amnesty International կազմակերպությունները:

Հայաստանի լրագրողական հանրության մտահոգվածությունը պայմանավորված է նաեւ նրանով, որ հաճախ պաշտոնատար անձինք, քաղաքական գործիչները, գործարարներն ու այլ հայտնի անձինք իրենց հասցեին անգամ օբյեկտիվ քննադատությունն ընդունում են որպես վիրավորանք ու զրպարտություն եւ դատարաններ են դիմում լրագրողների ու ՉԼՄ-ների դեմ հայցերով: Իսկ որպես իշխանության անկախ ճյուղ չձեւավորված դատական համակարգը միշտ չէ, որ արդար դատավարություն է ապահովում:

Համեմատելու համար, թե հիշատակված օրենսդրական փոփոխությունները որքան են համապատասխանում միջազգային նորմերին, մի քանի մեջբերում անենք 2021 թվականին ընդունված՝ Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի, ՄԱԿ-ի, Ամերիկյան պետությունների կազմակերպության, Մարդու ու ժողովուրդների իրավունքների

⁴ <https://assembly.coe.int/LifeRay/MON/Pdf/TextesProvisoires/2021/20211217-ArmeniaInstitutions-EN.pdf>

աֆրիկյան հանձնաժողովի հատուկ զեկուցողների համատեղ հռչակագրից⁵ «Քաղաքական գործիչների ու պաշտոնատար անձանց եւ կարծիքի ազատ արտահայտման մասին» վերնագրով: Փաստաթղթում մասնավորապես ասվում է, որ պետությունները «օրենսդրական, քաղաքական եւ պրակտիկ մակարդակով պետք է ընդունեն քաղաքական արտահայտությունների բարձր մակարդակով պաշտպանության առանձնահատուկ կառուցվածքներ, այդ թվում այնպիսի արտահայտությունների, որոնք կարող են ընկալվել որպես անհարկի քննադատական կամ նույնիսկ վիրավորական»: Այս պետությունները պետք է չեղարկեն «...գրպարտության համար ցանկացած քրեական հետապնդում, անհրաժեշտության դեպքում այն փոխարինելով քաղաքացիական իրավունքի՝ գրպարտության մասին համապատասխան նորմերով», ինչպես նաեւ՝

«... գրպարտության կամ պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու մասին ցանկացած օրենսդրական նորմ, որը հավելյալ պաշտպանում է պետությունների ղեկավարներին, կառավարությունները, քաղաքական գործիչներին, կամ որոնք ավելի կոշտ պատիժ են նախատեսում նրանց հասցեին հնչեցրած արտահայտությունների համար»:

Ի հավելումն այս դրույթներին՝ **ԵԱՀԿ փորձագետ Այդար Բոգատարովը** նշեց եւս մեկ կետ. բացի վիրավորանքի ու գրպարտության համար պատասխանատվության ապաքրեականացումից՝ հատուկ զեկուցողներն առանձնահատուկ ընդգծեցին նաեւ, որ անհրաժեշտ է ապահովել, որ «վնասի փոխհատուցումը համաչափ լինի, հաշվի առնելով բոլոր հանգամանքները, որպեսզի նման փոխհատուցման չարդարացված մեծ չափը ծանր ազդեցություն չունենա կարծիքի ազատ արտահայտման վրա»:⁶

Ինչպես տեսնում ենք, մոտեցումները տրամագծորեն հակադիր են: Ի դեպ, վիրավորանքի ու գրպարտության համար փոխհատուցման չափերի մասին: **Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժան Բարատայի** գնահատմամբ, Հայաստանի Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված գումարները չափազանց մեծ են, եւ դա այդքան էլ արդյունավետ չէ. տեղեկատվական վեճերում գլխավորը ոչ թե դրամական փոխհատուցումն է, այլ գրպարտության հերքումը, վիրավորելու համար հրապարակային ներողություն խնդրելը, ճշգրտված տեղեկատվությունը տարածելու նպատակով պատասխանի իրավունքի օգտագործումը:

⁵ <https://www.osce.org/representative-on-freedom-of-media/501697>

⁶ <https://www.osce.org/representative-on-freedom-of-media/501697>

Ակնհայտ է, որ հենց այս սկզբունքից ելնելով, Վրաստանում շատ հետաքրքիր դատական պրակտիկա է ձևավորվել. վիրավորանքի ու զրպարտության հետ կապված հայցերը քննելիս, եթե դրամական փոխհատուցում է պահանջվում, ապա նշանակվում է 1 լարի: Այդպես կանխարգելվում է տեղեկատվական վեճերով դատական գործեր նախաձեռնելու միջոցով շոշափելի գումարներ «աշխատելու», լրագրողների ու ՉԼՄ-ների վրա ճնշում գործադրելու, նրանց նյութապես «պատժելու» գայթակղությունը: Հիմնական շեշտը դրվում է, ինչպես վերը նշվեց, հերքման, ներողություն խնդրելու, պատասխան հրապարակելու վրա: Միաժամանակ, վիրավորանքի ու զրպարտության հիմքով տեղեկատվական վեճերում կարելուր տեղ է հատկացվում ՉԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի միջոցով ոչ դատական լուծումներին:

ԳՈՎԱԶԴԸ ՉԼՄ-ՆԵՐՈՒՄ

«Գովազդի մասին» ՀՀ օրենքը ՉԼՄ-ներին վերաբերող հոդվածներում հստակ պահանջներ ունի, սահմանում է իրավունքներ ու պարտականություններ, սահմանափակումներ ու պատասխանատվություն գործունեության այս ոլորտում: Դրանցում հիմնականում ներառված են ժողովրդարարության նորմերին համապատասխանող համընդհանուր միջազգային սկզբունքները: Այդ պատճառով փորձագետների հետ զրույցների ընթացքում մենք ավելի հետաքրքրված էինք հայկական օրենսդրության, մեր տեսանկյունից, խնդրահարույց հարցերով:

Դրանցից առաջինը քաղաքական եւ կոմերցիոն գովազդների տարանջատումն է. արդյո՞ք անհրաժեշտ է դա, եթե այո, ապա ի՞նչ սկզբունքներով: **Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժոան Բարատայի** կարծիքով, նման տարանջատումը շատ կարելուր է, եւ տարանջատում պետք է նախատեսել, ելնելով այն բանից, թե՞

ա/ ո՞վ է գովազդատուն, բ/ ի՞նչ բովանդակություն ունի գովազդը, գ/ ի՞նչ շահ կա այդտեղ, կոմերցիո՞ն, թե՞ քաղաքական: Սա սոցիալական գովազդին չի վերաբերում: Բայց, խիստ մոտեցմամբ, եթե գովազդն ուղղված չէ ֆինանսատնտեսական շահ ստանալուն, ապա այստեղ կարող են քաղաքական շահեր գործադրված լինել: Իհարկե, երբեմն այս սահմանը շատ նուրբ է լինում: Այդ պատճառով օրենսդրության մեջ քաղաքական գովազդը նախատեսվում է միայն ընտրությունների փուլում:

Ինչպես ցույց տվեց փորձագիտական մեր հարցումը, եվրոպական մի շարք երկրներում գնացել են էլ ավելի խիստ տարանջատման ճանապարհով: Այսպես, **Չեխիայում** հեռուստատեսությունում ու ռադիոյում լիովին բացառված է քաղաքական գովազդը, նույնիսկ ընտրությունների ժամանակ: Եվ սա գործում է արդեն 8 տարի: Նույնը նաեւ երկրի օնլայն հեռարձակողներին է վերաբերում: Նման մոտեցում է կիրառվում նաեւ **Շվեդիայում**: Հեռուստաընկերությունների եթերում քաղաքական գովազդի արգելք է գործում նաեւ **Դանիայում**, սակայն ռադիոյում այդպիսի գովազդ մասամբ, որոշակի սահմանափակումներով, թույլատրված է: **Էստոնիայի** օրենսդրության մեջ չկա «քաղաքական գովազդ» ձեւակերպումը, ամեն ինչ կոմերցիոն է համարվում, ինչին միջազգային կազմակերպությունները քննադատաբար են վերաբերվում: **Ուկրաինայում** նույնպես օրենքը չի նախատեսում գովազդի այս երկու տեսակների տարանջատում: **Վրաստանում ու Մոլդովայում** ՉԼՄ-ներում քաղաքական գովազդ լինում է միայն ընտրությունների ժամանակ: Նույնը նաեւ Հայաստանում է:

Երկրորդ մեզ հետաքրքրող հարցը՝ թույլատրվա՞ծ է, արդյոք, կոմերցիոն գովազդը Հանրային հեռուստառադիոընկերությունում: **ժոան Բարատան** նշում է, որ միջազգային կազմակերպությունները դա չեն ողջունում, եւ եթե որեւէ երկրում օրենսդրությամբ նման բան է նախատեսվում, անհրաժեշտ են հստակ հիմնավորումներ եւ խիստ սահմանափակումներ, որոնք թույլ չեն տա հանրային ընկերություններին հեռարձակել գովազդը նույն ծավալով, ինչպես դա թույլատրվում է մասնավորներին:

Ինչպես ցույց տվեց մեր հարցումը, հանրային հեռուստառադիոընկերություններում կոմերցիոն գովազդն արգելված է **Շվեդիայում, Դանիայում, Էստոնիայում, Լիտվայում** (բացառություն են կազմում նման գովազդով հեռարձակվող միջազգային սպորտային, մշակութային եւ այլ հաղորդումները):

Երրորդ հարցը՝ մեդիա ինդուստրիայի ներսում գովազդային քաղաքականության մասին պայմանավորվածությունների առկայությունն է: Եվրամիության երկրներում՝ **Շվեդիայում, Դանիայում, Էստոնիայում, Լիտվայում** գովազդի բովանդակության ու դրա մատուցման հարցերում մեծ դեր է հատկացվում ՉԼՄ-ների ինքնակարգավորման համակարգին: Ինչ վերաբերում է ֆինանսատնտեսական կողմին (կենտոնրացման ու մոնոպոլիզացման կանխարգելում, ոչ բարեխիղճ մրցակցություն եւ այլն), ապա այս հարցերը կարգավորվում են օրենսդրության հակամենաշնորհային դրույթներով: Այդուհանդերձ, հաճախ գովազդի ոլորտում ՉԼՄ-ների օրենսդրական կարգավորումն ու ինքնակարգա-

վորումը, ինչպես մեդիայի գործունեության այլ ոլորտներում, սերտորեն փոխկապակցված են եւ փոխլրացնող: Օրինակ, Էստոնիայում օրենքն արգելում է «քողարկված գովազդը», բայց այս կարգի տեղեկատվական վեճերը կարող են դիտարկվել ՉԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի շրջանակներում՝ լրագրողական էթիկայի տեսանկյունից:

Ի դեպ, «Գովազդի մասին» ՀՀ օրենքում նույն կերպ արգելված է այսպես կոչված «հովանոցային գովազդը»: ՉԼՄ-ները հաճախ են խախտում այս պահանջը, չկրելով ոչ մի պատասխանատվություն՝ ոչ վարչական-իրավական, ոչ էլ բարոյական ու մասնագիտական (ասենք՝ մեդիա համայնքի ներսում):

ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՖԵՅՔԵՐԻՆ ՈՒ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻՆ

Ակնհայտորեն պետք է տարանջատել ֆեյք լուրերը ատելության խոսքից եւ բռնության քարոզից (ատելության խոսքի ծայրահեղ դրսեւորումից): Նախեւառաջ այն պատճառով, որ դրանք տարբեր կերպ են աղտոտում տեղեկատվական դաշտը եւ մարդկանց գիտակցությունը, տարբեր են դրանց բովանդակությունը եւ զգայականությունը, ինչպես նաեւ՝ սպառնալիքներն ու հնարավոր հետեւանքները: Եթե ֆեյք լուրերը հիմնականում նպատակաուղղված են բնակչության լայն շերտերին ապատեղեկացնելուն, նրանց ապակողմնորոշելուն, մոլորեցնելուն եւ հետագա մանիպուլյացիաների համար հիմքեր ստեղծելուն, ապա ատելության խոսքն ու բռնության քարոզը գլխավորապես օգտագործվում են անհանդուրժողականություն, թշնամանք գեներացնելու համար: Սա, իհարկե, առանձին հետազոտության թեմա է:

Սակայն առաջարկված տարբերակումը կարելու է նաեւ օրենսդրական կարգավորման տեսանկյունից, այս երկու խնդիրներին տարբեր մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությամբ: Եթե ատելության խոսքն ու բռնության քարոզը միջազգային հանրությունն ավելի շատ դիտարկում է խտրականության (ազգային, ռասայական, կրոնական, քաղաքական, սոցիալական, սեռական եւ այլ) համատեքստում եւ պատասխանատվության տարբեր միջոցներ է նախատեսում, ներառյալ՝ քրեականը, ապա ֆեյք տեղեկությունների տարածման նկատմամբ վերաբերմունքը որոշ չափով այլ է:

Մասնավորապես, **Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժոան Բարատան**, հղում անելով Արտահայտման ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի դիրքորոշմանը, նշեց, որ ֆեյք նորություններ արգելող օրենսդրությունն անհամատեղելի է մարդու իրավունքների հետ, քանի որ պետության (քաղաքական իշխանության, կարգավորող մարմինների, դատական ատյանների) ձեռքում հայտնվում է գործիք, որով որոշվում է, թե ինչն է ճշմարիտ, ինչը՝ կեղծ, այսինքն՝ ֆեյք: Նրա կարծիքով՝ մեծ սխալ կլիներ իշխանություններին նման իրավասություններով օժտելը: «Ֆեյքերի դեմ պայքարը պետք է իրականացվի ոչ թե օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներով ու արգելքներով, այլ պրոֆիլակտիկ միջոցներով, որոնք կկանխարգելեն կեղծ տեղեկատվության բացասական ազդեցությունը: Պետությունը պետք է, նախեւառաջ, խթանի մեդիագրագիտության տարածումը, որ մարդիկ ավելի լավ կողմնորոշվեն, թե ինչ տեղեկատվական արտադրանքի հետ գործ ունեն, երկրորդ՝ պետությունը պարտավոր է խրախուսել որակյալ լրագրությունը, մասնագիտական էթիկայի նորմերին հետեւելը եւ ՉԼՄ-ների ինքնակարգավորումը, երրորդ՝ սատարել լսարանին որակյալ կոնտենտ տրամադրող հանրային հեռուստառադիոընկերությունների զարգացմանը, եւ չորրորդ՝ անհրաժեշտ է բարենպաստ միջավայր ստեղծել բազմազան ու բազմակարծիք ՉԼՄ-ների գործունեության համար: Նման պայմաններում հնարավոր կլինի չեզոքացնել կամ, ծայրահեղ դեպքում, նվազագույնի հասցնել ֆեյք նորությունների նեգատիվ ազդեցությունը», - եզրափակում է Ժոան Բարատան: Ի դեպ, փորձագետի կարծիքով՝ նման միջավայրի ձեւավորումը կնպաստի նաեւ ատելության խոսքի ու բռնության քարոզի կրճատմանը, չնայած դրանց համար օրենսդրական պատնեշը նույնպես շատ կարեւոր է:

ԵԱՀԿ-ում նույնպես մտահոգված են ֆեյք լուրերի ու ապատեղեկատվության լայն տարածմամբ: Կազմակերպության **փորձագետ Այդար Բոտազարովը** տեղեկացրեց, որ անցած տարի այս երեւույթներին դիմակայելու հնարավորությունները դիտարկելու նպատակով իրենք 4 փորձագիտական հանդիպումներ են անցկացրել: Բայց բանավեճերը շարունակվում են, եւ հենց որոշումներն ընդունվեն, ԵԱՀԿ-ն հանձնարարականներ կմշակի մասնակից պետությունների համար:

Եվրամիության երկրներում նույնպես ապատեղեկատվության ու ֆեյք լուրերի խնդիրներով ակտիվ քննարկումներ են ծավալվում: Ընդ որում՝ մոտեցումները հաճախ տարբերվում են: Այսպես, **չեխ փորձագետ Իրժի Կուչերայի** կարծիքով, պետք է ներդնել օրենսդրական մեխանիզմներ՝ ձեւակերպել «ֆեյք նյութ» եւ «ապատեղեկատվություն»

հասկացությունների սահմանումները եւ դրանց հիման վրա նախատեսել պատասխանատվության չափը: **Էստոնացի փորձագետ Տարմու Տամմերկն** իր հերթին կարծում է, որ այստեղ ավելի կարեւոր են ՉԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի առկայությունը, մեղիագրագիտության տարածումը, ինչպես նաեւ հատուկ հարթակների եւ փաստերի ստուգմամբ զբաղվող թիմերի գործունեության զարգացումը: Միաժամանակ, ըստ նրա, երկրի օրենսդրության մեջ պետք է ուժեղացնել այն դրույթները, որոնք վերաբերում են պատասխանատվության չափին, քանի որ, օրինակ, բռնության քարոզի համար պատիժ է նախատեսվում միայն այն ժամանակ, եթե այն ռեալ սպառնալիք է պարունակում:

Դանիայում, ինչպես տեղեկացրեց Գոհար Խոջայանը, եթե ֆեյքերի միջոցով խախտվել է ատելության խոսք հրահրելու, զրպարտելու եւ մանկական պոռնոգրաֆիա տարածելու արգելքը, ապա դրա համար նախատեսված է քրեական պատասխանատվություն՝ ընդհուպ մինչեւ 2 տարվա ազատազրկում: Իսկ մնացած բոլոր վեճերը, որոնք վերաբերում են կեղծ լուրերին, ատելության խոսքին եւ բռնության քարոզին, լուծվում են ՉԼՄ-ների ինքնակարգավորման միջոցով:

Այս իմաստով բոլորից շատ առաջ է անցել **Շվեդիան**: Այս տարվա սկզբին այստեղ ստեղծվել է պետական մարմին, որը պետք զբաղվի ֆեյք լուրերի, ատելության խոսքի եւ բռնության քարոզի դեմ պայքարի խնդիրներով: Այդ մարմինը պետք է մշակի եւ իրականացնի միջոցառումների մի համակարգ, որը կկանխի կամ, ծայրահեղ դեպքում, նվազագույնի կհասցնի նման կոնտենտի տարածումը: Դեռեւս հայտնի չէ՝ կլինե՞ն արդյոք այդ համակարգում օրենսդրական սահմանափակումներ, հասարակական նախաձեռնություններ եւ կարգավորող այլ մեխանիզմներ, թե՞ ամեն ինչ կկիրառվի համալիր կերպով, բայց ակնհայտ է, որ այստեղ տեղեկատվական կլիմայի առողջացման խնդիրը լուծելու է պետությունը: Շվեդիան իր ժողովրդավարական ավանդույթներով եւ հանրային մշակութային մակարդակով կարող է իրեն նման բան թույլ տալ, առանց իր քաղաքացիների իրավունքները ոտնահարելու ռիսկի:

Ինչ վերաբերում է Հայաստանին եւ Արեւելյան գործընկերության մյուս երկրներին, ապա թեեւ այստեղ էլ է լուծումների փնտրտուք ընթանում, սակայն դիտարկվող առաջարկությունները դեռեւս անարդյունավետ են մնում, քանի որ խոսքի ազատության ակնհայտ սպառնալիքներ են պարունակում:

ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հայաստանում անալոգային հեռարձակումից թվայինին անցումը, որը պաշտոնապես ավարտվեց 2016 թվականին, մի շարք չափանիշներով չէր համապատասխանում այդ գործընթացին վերաբերող միջազգային պահանջներին: Մասնավորապես, երկրի մարզերում գործող շուրջ 10 հեռուստաընկերություն իշխանությունների կողմից ներդրված անհիմն օրենսդրական սահմանափակումների հետեւանքով զրկվեց թվայնացման եւ եթերում աշխատելու հնարավորությունից: Դրանցից շատերը կամ փակվեցին, կամ ստիպված եղան տեղափոխվել ինտերնետ տիրույթ, կամ անցան կաբելային հեռարձակման՝ կորցնելով լսարանի մեծ մասը: Թվայնացման գործընթացում նպաստավոր պայմաններ չստեղծվեցին մասնավոր մուլտիպլեքսներ ձեւավորելու համար, բոլոր եթերային հեռուստա- եւ ռադիոընկերությունները տեղավորվեցին հեռարձակման պետական ցանցում, տեղի ունեցավ կենտրոնացում և մոնոպոլիզացում, իսկ ձեւավորված թվային շահաբաժինը փոշիացվեց եւ օգտագործվեց այլ կոմերցիոն նպատակներով: Ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ գործնականում վարկաբեկվեց «սոցիալական փաթեթ» հասկացությունը. բոլոր թվայնացված հեռարձակողները անվճար հասանելի դարձան ուղջ լսարանին՝ կախված դրանց ծածկույթից (համազգային, մայրաքաղաքային կամ մարզային): Երկրում պահպանվեց հեռուստառադիոընկերությունների լիցենզավորման հնացած բարդ համակարգը, որտեղ կան սուբյեկտիվ եւ կամայական որոշումներ կայացնելու լայն հնարավորություններ: 2020թ. ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը չլուծեց բոլոր այս խնդիրները, ավելին՝ այն չօգնեց բարեփոխելու Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անկախության ապահովման հետ կապված իրավիճակը:

Մինչդեռ հարեւան Վրաստանում թվայնացման գործընթացն էապես ավելի հաջող անցավ, ընդ որում՝ պետական մարմինների եւ հասարակական կազմակերպությունների սերտ համագործակցությամբ: Ոչ մի հեռուստա- եւ ռադիոընկերություն, անգամ որեւէ շրջանում գործող փոքր ստուդիա այդ գործընթացի արդյունքում չփակվեց: Հակառակը, բոլորը թվայնացվեցին, եւ նրանց առջեւ բացվեցին զարգացման նոր հեռանկարներ: Մասնավորապես, շրջաններում գործող բոլոր հեռուստաընկերությունների համար պետությունը բարենպաստ պայմաններ ստեղծեց թե՛ դրանց թվայնացման եւ թե՛ տեղական նշանակության սեփական մուլտիպլեքս ստեղծելու համար, որը բացի տվյալ ստուդիայի հաղորդումները հեռարձակելուց կարող է սպասարկել փոքր համայնքային հեռուստա- եւ ռադիոկայանները:

Հեռարձակման ոլորտի փոփոխությունների վրացական փորձի մեկ ուրիշ գրավիչ կողմը դարձավ հեռուստառադիոընկերությունների լիցենզավորման ավանդական, մեծապես հնացած մրցութային համակարգից հրաժարումը եւ պարզեցված, ըստ էության, ծանուցման կարգին անցումը: Անկասկած, դա ավելի շատ է համապատասխանում ժամանակակից թվային պայմաններին, ազատում է ոլորտը անհարկի բյուրոկրատական խոչընդոտներից եւ լիցենզիա տրամադրելու հարցում սուբյեկտիվ, հաճախ նաեւ՝ կամայական որոշումներից:

Դրական գնահատելով վերը բերված բարեփոխումները՝ **վրաց փորձագետ Լաշա Տուգուշին**, միեւնույն ժամանակ բավական քննադատաբար արտահայտվեց կարգավորող մարմնի՝ Հաղորդակցությունների հարցերով վրացական ազգային հանձնաժողովի անկախության ապահովման վերաբերյալ: Ըստ օրենքով նախատեսված կարգի՝ հանձնաժողովը կազմավորվում է կառավարության, նախագահի ու խորհրդարանի կողմից: Այս կարգը Վրաստանում ժողովրդավարության ձեւի հետ համեմատելով՝ փորձագետն ընդգծեց, որ պետք է այն վերանայել, գործընթացն ավելի ներառական դարձնել՝ հասարակական կազմակերպությունների, անկախ ինստիտուտների ու փորձագետների ներգրավմամբ: Որպես դրական օրինակ Լաշա Տուգուշին մանտանշեց Վրաստանի Հանրային հեռարձակողի վարչության կազմավորման կարգը. այն ունի 9 անդամ, որոնցից 2-ին առաջադրում է Օմբուդսմենը, 3-ին՝ խորհրդարանական մեծամասնությունը, 3-ին՝ խորհրդարանական ընդդիմությունը, 1-ին Աջարական ինքնավար հանրապետությունը: Այսպիսի կարգը դեռեւս իրեն արդարացնում է:

Լիտվայում նույնպես թվային հեռարձակման անցնելու փուլում բոլոր ընկերությունները, որոնք ուզում էին այդ ոլորտի բիզնեսով զբաղվել, ստացան լիցենզիաներ: Դրա համար, օրինակ, ի սկզբանե ստեղծվել էին 4 մուլտիպլեքսներ, բայց հետագայում պարզվեց, որ այդքանի կարիք չկա, եւ հիմա գործում են ընդամենը 2-ը, որոնցից մեկը պետական է, մյուսը՝ մասնավոր: Ինչ վերաբերում է հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնին, ապա դրա անկախության կարեւորագույն պայմանը ֆինանսավորման մեթոդն է. բոլոր մասնավոր հեռուստա- եւ ռադիոընկերությունները իրենց գովազդային եկամուտների 0,8% փոխանցում են այդ մարմնին: Բացի այդ, դրա կազմավորման կարգը նախատեսում է լրագրողական հասարակական կազմակերպությունների եւ ստեղծագործական միությունների ակտիվ ներգրավում: Ճիշտ է, թեկնածուներ ներկայացնում են նաեւ երկրի նախագահը եւ խորհրդարանը, բայց վերջիններս նույնպես պետք է անկախ անձանց առաջադրեն՝ ոչ պետական պաշտոնյաների եւ ոչ քաղաքական գործիչների:

Ի տարբերություն Լիտվայի, **Էստոնիայում** կան խնդիրներ՝ կապված կարգավորող մարմնի հետ. այն Էկոնոմիկայի նախարարության մի ստորաբաժանումն է, ինչը քննադատությունների տեղիք է տալիս: **Էստոնացի փորձագետ Տարմու Տամմերկի** խոսքով՝ այդ մարմնի գործունեության մեջ չի զգացվում կախվածություն նշված նախարարությունից: Բայց քանի որ Եվրոպական հանձնաժողովն այդպիսի կարգավիճակն անընդունելի է համարում, այն կփոխվի, եւ այդ ուղղությամբ արդեն աշխատանք է տարվում:

Սակայն եւ Էստոնիայում, եւ Լիտվայում գործում են հանրային հեռուստաընկերությունների խորհուրդների ձեւավորման բավական հետաքրքիր սխեմաներ, որոնցում ծանրակշիռ տեղ է հատկացվում լրագրողական կազմակերպություններին: Այսպես, Էստոնիայի Հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի Վերահսկող խորհուրդը պետք է բաղկացած լինի 4 անկախ մեդիա փորձագետներից եւ խորհրդարանի բոլոր խմբակցությունների ներկայացուցիչներից (նրանց թիվը կարող է փոխվել ընտրությունների արդյունքների համաձայն): Լիտվայում Հանրային հեռարձակողի խորհուրդը կազմված է 12 անդամից՝ 4-ական առաջադրվածներ լրագրողական կազմակերպություններից, երկրի նախագահից եւ խորհրդարանից:

Եվ չնայած սրան, **Եվրոպայի խորհրդի փորձագետ Ժան Բարատայի** գնահատմամբ, օրենսդրությունը, որքան էլ լավը լինի, հեռարձակման ոլորտի եւ հանրային հեռուստառադիոընկերությունների կարգավորող մարմինների անկախությունն ապահովող միակ գործոնը չէ: «Այստեղ շատ բան կախված է երկրի քաղաքական ու հասարակական մշակույթի մակարդակից, ձեւավորված ավանդույթներից եւ նրանից, թե որքան կայացած են պետական եւ այլ ինստիտուտները», - նշեց փորձագետը:

Այս միտքը կարելի է ակառու դարձնել Չեխական հեռուստատեսության եւ Չեխական ռադիոյի ֆինանսավորման փորձով: Որպես հանրային հեռարձակողներ դրանք գործում են շնորհիվ քաղաքացիների ամենամյա վճարումների եւ իրավաբանական անձանց դրամական փոխանցումների: **Չեխ փորձագետ Իրժի Կուչերայի** խոսքով՝ լինում են դեպքեր, երբ մարդիկ իրենց դժգոհությունն են արտահայտում, թե մենք այդ ալիքներից չենք օգտվում, ինչո՞ւ պետք է վճարենք: Բայց նրանց պատասխանում են, որ իրենք վճարում են ոչ միայն իրենց, այլեւ հասարակության համար: 2020 թվականին անցկացված սոցիոլոգիական հարցման տվյալներով՝ Չեխիայի բնակչության 79%-ը կողմ է արտահայտվել հանրային հեռարձակողների համար այսպես կոչված կոնցեսիոն վճարները պահպանելու օգտին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական հարցումը ցույց տվեց, որ միջազգային կառույցներում, Եվրամիության երկրներում, ընդհանուր առմամբ զարգացած ժողովրդավարություններում կա տեղեկատվական ոլորտի արդի մարտահրավերների պատասխանները գտնելու ակտիվ փնտրտուք: Դա վերաբերում է եւ թվային դարաշրջանում «2LU» ու «լրագրող» հասկացություններին, եւ մեդիայի սեփականության ու ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությանը, եւ որակյալ լրագրության զարգացմանն ուղղված պետական աջակցությանը, եւ տեղեկատվության ազատության իրավունքի իրացման համար խոչընդոտների հաղթահարմանը, եւ 2LU-ներում վիրավորանքի ու զրպարտության հետ կապված խնդիրներին, եւ կեղծ լուրերի դեմ պայքարին, եւ հեռուստառադիոընկերությունների գործունեության կարգավորմանն ու այս զեկույցում ներկայացված այլ հարցերին:

Հատուկ ուշադրության է արժանի այն երկրների փորձը, որտեղ ձեւավորված է միասնական եւ փոխկապակցված օրենսդրական կարգավորման եւ 2LU-ների ինքնակարգավորման համակարգ: Երկրորդը ոչ թե պարզապես լրացնում է առաջինին, ինչպես հաճախ է լինում, այլ ընդհանուր մեխանիզմի բաղկացուցիչն է: Մեխանիզմ, որի յուրաքանչյուր դետալ նշանակություն ունի եւ իր դերն է խաղում: Անկասկած, նման համակարգի ստեղծումը հեշտացվում է, եթե երկրում կան կայուն ժողովրդավարական ավանդույթներ, հասարակական հարաբերությունների զարգացած մշակույթ: Բայց կան դեպքեր, երբ հակառակն է լինում. այդպիսի ավանդույթներ ու մշակույթ սկսվում են ձեւավորվել 2LU-ների բնագավառում նոր, արմատապես փոխված, մանրազնին մտածված «խաղի կանոններ» ներդնելու հիման վրա:

Փորձագիտական հարցումը ոչ միայն ապացուցեց Հայաստանի մեդիա օրենսդրության արդիականացման անհրաժեշտությունը, այլեւ թույլ տվեց կոնկրետ օրինակներով ուսումնասիրել միջազգային փորձը, որը հետագայում կօգտագործվի 2LU-ների օրենսդրական կարգավորման եւ ինքնակարգավորման սեփական մոդել ստեղծելիս:

Այս խնդրի լուծման համար խորհուրդ է տրվում.

- մշակել Հայաստանի տեղեկատվական ոլորտի զարգացման եւ մեդիա օրենսդրության բարեփոխման Հայեցակարգ: Փաստաթղթում պետք է ներկայացնել՝ այդ ոլորտի ընդհանուր տեսլականը (թե ինչպիսին պետք է այն լինի), ոլորտի զարգացմանը խոչընդոտող

խնդիրները, դրանց լուծման միջազգային փորձը, որակապես նոր, առողջ տեղեկատվական միջավայրի ձեւավորմանն ուղղված գործողությունների ռազմավարությունն ու մարտավարությունը, մեդիա օրենսդրության բարեփոխման հիմնական ուղղություններն ու սկզբունքները:

- օգտագործելով մեդիա բնագավառում արդի խնդիրների՝ միջազգային պրակտիկայի առավել հաջող եւ Հայաստանի համար կիրառելի լուծումները, մշակել ՉԼՄ-ների գործունեության օրենսդրական կարգավորման եւ ինքնակարգավորման (կամ համակարգավորման) տեղական մոդելը, որում այդ երկու համակարգերը սերտորեն փոխկապակցված կլինեն, իսկ դրանց ներսում մեխանիզմները՝ փոխալայմանավորված (այստեղ հատուկ ուշադրության է արժանի Լիտվայի փորձը):

- Հայեցակարգում շարադրված հիմնարար սկզբունքների, ՉԼՄ-ների իրավական կարգավորման եւ ինքնակարգավորման նոր մոդելի հիման վրա իրականացնել մեդիա օրենսդրության բարեփոխում՝ ժամանակակից միջազգային նորմերին համապատասխանող նոր օրենքներ մշակելու եւ ընդունելու միջոցով:

- ապահովել Հայեցակարգի մշակման, ՉԼՄ-ների օրենսդրական կարգավորման եւ ինքնակարգավորման տեղական մոդելի մշակման ողջ գործընթացի, ինչպես նաեւ նոր օրենքների պատրաստման թափանցիկությունը, նախաձեռնել հատուկ աշխատանքային խմբերի ձևավորում, կազմակերպել առաջարկվող գաղափարների եւ օրենսդրական նախագծերի լայն քննարկումներ՝ ՀՀ խորհրդարանի ու կառավարության ներկայացուցիչների, ՉԼՄ-ների, լրագրողական կազմակերպությունների, միջազգային կառույցների, անկախ փորձագետների մասնակցությամբ: